

Ժարանս ջահաստանի առ ոտս վարդապետաց  
 20 եւ բանասիրաց : Եւ երբեմն ընթերցեալ իմ  
 զՎարս հարանց եւ զՊատմութիւնս վիպասա-  
 նաց, անկաւ ի սիրտ իմ փափազ եւ ջերմ սէր,  
 ըստ այնմ թէ «Ջեռաւ սիրտ իմ ի փորի իմում,  
 եւ ի խորհուրդս իմ վառեցաւ հուր», ի բա-  
 25 զում ամաց եւ ի վաղուց հետէ. վասն որոյ  
 եւ սոչորէր սիրտ իմ, գալարէին աղիք իմ  
 միշտ եւ հանապազ, շրջագայիլ եւ տարաշ-  
 խարհիկ լինել յօտար եւ յանձանօթ դաւառան  
 եւ ի սիրիւոս հեթանոսաց : Այլ եւ ուխտիւ  
 30 գնալ նախ յաստուածակոխ քաղաքն սուրբ  
 Երուսաղէմ՝ յերկրպագութիւն լուսարուխ  
 սուրբ գերեզմանին Քրիստոսի եւ այլոց սուրբ  
 տնօրինականացն որ անդ : Եւ անախ գնալ ի  
 Մուշ, ուր նշխարքն է սրբոյն Յովհաննու  
 35 Մկրտչի. եւ ապա ի մեծն Հոտմ, ի սուրբ  
 գերեզմանն Պետրոսի եւ Պօղոսի եւ այլ յոք-  
 նախումբ եւ բազմահաւաք արեամբ ներկեալ  
 սուրբ վկայիցն : Եւ վասն այսմ բարի մտա-  
 ծութեանս յոգոց հանեալ միշտ հառաչմամբ  
 40 աղաչէի զխնդրակատարն Աստուած՝ զտուիչն  
 ամենայն բարեաց եւ կատարիչն ամենայն  
 խնդրուածոց, զյսոզն աղօթից, զի տացէ ինձ  
 ըստ սրաի իմում. եւ ցուցցէ ինձ զճանա-  
 պարհ յոր եւ գնացից, հասուցանել զիս այս  
 45 հոգեւոր եւ աստուածային բաղձանացս :

19 ջահաստանի յոտս : — 20 ընթերձեալ : —  
 37 յարեամբ : — 39 հառաչմամբ : — 44 յոյս : —  
 45 յաստուածային :